

# ՀԱԶԱՐ
# ՈՒ ՄԻ ԽԱՂ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՅԻՍՆԵԱԿ

Խմբագրեցին
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

Վաղարշապատ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1905

Дозволено ценз. 16 Іюня 1904 г. г. Тифлисъ.

# ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՅԻՍՆԵԱԿ

I

*Ծիրանի ծառ, բար մի տա,*
Վա՜յ.
*Ճըղներըդ խրար մի տա,*
Վա՜յ.
*Ամեն մէջըդ ման գալիս*
*Ցաւերըս խրար մի տա.*

Հա՛, տըղե՛ք, յե՛ս տըղեք, սա՛րեր,-նոյն ընկաւ,
Արտիս խրնդում ծոյն ընկաւ.
Գընայ, էլ յես չըգայ ես տարուա տարին,—
Սեւ դարդն իմ վըզոյն ընկաւ:
Հո՛վ, նո՛վ, նոյն ընկաւ,—
Արտիս խրնդում ծոյն ընկաւ.

Մեռայ բաղում բանելէն,
Մի կողմէն ջուր անելէն.
Ծառերին թուփ չը մընաց,
Դարդիս դարման տանելէն։

Սև ամպը գըցել ա հով.
Մութը տըւել ա իմ՝ քով.
Տեսնում էր՝ ինձ պատել ա
Էս անխրաւ արիւն ծով։

Նըստած տեղիս քար չունիմ,
Էրուած սըրտիս ճար չունիմ.
Ա՜յ անօրէն, փուչ աշխարհ, —
Բաղ ունիմ՝ ու բար չունիմ։

## 2

Էջմիածին երթամ ուխտ,
Պագնեմ սեղան ջուխտէ ջուխտ.
Կանչեմ զօրաւոր սրբեր,
Իմ հիւանդին անեմ թուղթ։
Անտառս-կար Աստուածածին,
'Դու ողջ պահէ՛ նանի բալին։

Լուսաւորչի ծառները
Մատաղ անեմ դառները. —
Լուսաւոր զօրքիդ մեռնեմ,
Ջոկել ես արդարները։

Էջմիածին, քո վանքը
Լիքն ա Աստըծու բանքը. —
Աղաչեմ Լուսաւորչին՝
Պահէ իմ որդի կեանքը։

3

Լուսաստղը ժիթ գըցեց դուռ,
Գութան քըշէր դար ի դուռ։
Հոռովել հօ՜։

Արտուտ թըռաւ իր բընէն,
Լոռ ծագեց աղօթրանէն։

Քամին անուշ շընկշընկաց,
Թուփն ու ծաղիկ տընկտընկաց։

Հօտաղներ, շուտ վեր ելէք,
Խարազան ու լըծեր լըծէք։

Մաճկալ, նայէ՛ դէմ՝ աղօթրան,
Փառք տուր Աստծուն մէկ բերան։

Մըրոյ գոմէշ լըծի տակ,
Թող դըլորի սըրդափիկ ակ։

Հառայել տուր, մանկալ ջան,
Իմ ջան քո ջանին զուրբան—

Եղնայրած եղներ տարաւ,
Խանբաջին փըլաւ բերաւ—

Մութն ընկաւ, գուժան թորկին,
Մանկալ, հօտաղ կըպաակին։

Մըրտոն պառկե մէջ առուին,
Կը գըռմըրայ վեր պառուին։

Հօտաղ, քե մատաղ, պառկի,
Թող մեր չարկամ ակըռկի։

Դառներ գմարիր կըծըծին,—
Քունն անուշ պըզտիկին, մեծին։

4

Հօ՛։—

*Օրհնեալ է Աստուած,*

*Յիշեալ է Աստուած։*

Հօ՛, հօ՛, եօ՛-ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Պոէ՛րէ, զո՛մէ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Ա՛ռ, հա՛ զումէ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Տա՛ր, հա՛ զումէ, հօ՛, հօ՛յ, եօ՛։

*Լոյսը լուսացաւ.*

Հա՛, հա՛,
Փա՛ռք Քեզ. Տէ՛ր.

*Բարին շատացաւ։*

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հօ՛, հօ՛յ.
Եօ՛-ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Պոէ՛րէ, զումէ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛,
Ա՛ռ, հա՛ զումէ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Տա՛ր, հա՛ զումէ, հօ՛, հօ՛յ, եօ՛։

*Աղօթրան բացուաւ.*

Հա՛, հա՛,
Փա՛ռք Քեզ. փա՛ռք.

*Մեր ժամը լցուաւ։*

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, օ՛. հօ՛յ.
Եօ՛-ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Բռէ՛րէ. զո՛մէը. հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Ա՛ռ, հա՛ զումէը, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Տա՛ր, հա՛ զումէը. հօ՛, հօ՛յ. եօ՛:

Բռէ՛րէ, ջա՛ն. հօ՛, պռօ՛րօ, հօ՛, պռի՛ւզի, ջա՛ն.
Հօռօլայ, հօռօլայ, քե՛ զուրբան.
Ծի՛մայ ջան, հօռօլայ. քե՛ մեռնիմ.
Լա՛չին ջան, հօռօլայ, հօռօլայ, հօռօլօ։

*Եղ՛նաբաձ քրնի.*

Հա՛, հա՛.

Վե՛ր կացէք. զուբա՛նուռ,

*Փուժանը բանի։*

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, օ՛, հօ՛յ.
Եօ՛-ա, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Բռէ՛րէ, զումէը, հօ՛, հօ՛յ. եօ՛-ա՛,
Ա՛ռ, հա՛ զումէը. հօ՛, հօ՛յ. եօ՛-ա՛.
Տա՛ր, հա՛ զումէը. հօ՛, հօ՛յ. եօ՛։

Բռէ՛րէ, ջա՛ն, հօ՛ պռօ՛րօ, հօ՛ պռի՛ւզի, ջա՛ն.
Հօռօլայ, հօռօլայ, քե՛ զուրբան.
Ծի՛մայ ջան, հօռօլայ. քե՛ մեռնիմ.
Լա՛չին ջան. հօռօլայ. հօռօլայ, հօռօլօ։

*Գալիս, գալիս է.*

Ճա՛, ճա՜.

Ա՜յ, ճրրվր՛ս, ճրրվր՛ս,

*Ակը լալիս է.*

Ճէ՜, ճէ՛, ճէ՜, ճէ՜, օ՜, ճօ՜յ,
Եօ՜-ա՜, ճօ՜, ճօ՛, ճօ՜, ճօ՛, ճօ՜.
Գռէ՛րէ, գռ՛մէշ. ճօ՜, ճօ՜յ, եօ՜-ա՛,
Ա՛ռ, ճա՛ գոմէշ, ճօ՜, ճօ՜յ, եօ՜-ա՜.
Տա՛ր, ճա՛ գոմէշ, ճօ՜, ճօ՜յ, եօ՜:

Ճօ՜յ, դո՛ւն եկաւ, ճօ՜, ա՜,
Ճօ՜յ, դո՛ւն եկաւ, ճօ՜, ա՜,
Ճօ՜յ, դո՛ւն եկաւ. ճօ՜, ա՜.

Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ,
Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ.
Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ,
Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ.

Ճօ՜յ, ռա՛ւել ա, ճօ՜, ա՜,
Ճօ՜յ, ռա՛ւել ա, ճօ՜, ա՜,
Ճօ՜յ, ռա՛ւել ա, ճօ՜, ա՜.

Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ,
Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ,
Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ,
Ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ, ճօռօ:

Ճօ՜, դո՛ւն եկաւ, ճօ՜,

*Օրհնեալ է Աստուած,*
*Յիշեալ է Աստուած.*
*Մաճկալը մաճի՛,*
Ա՛յ հորեւոր,
*Օղերն ականջին.*
*Հօտաղն է լալի.*
Քէհի՛, ա՛յ լալիկ հօտաղ,
*Միջակն է գալի.*
*Վարենք՝ շտապանայ,*
Տո՛կան ջան,
*Տէրն ուրախանայ.*
*Թամփ տուր՝ թեւ արա,*
Ա՛յ խոփ ու ձեւիչ,
*Նուռ տուր՝ սեւ արա:*

*Օրհնեալ է Աստուած,*
*Յիշեալ է Աստուած.*
*Ջօրանմա, հօտաղ,*
Քէհի՛ր, փոշեսուն.
*Ես քեզի մատաղ.*
*Վարենք՝ արտ ամենք.*
Ճէկիկ ջան,
*Ջարին դարդ ամենք:*

Եկաւ ու գընաց,
Զրկոտրի սամին.
Մեծ եղը մընաց.

Թևին դո՛րծ գընե՛նք,
Ա՛յ կրտրիչ ուժուոր.
Ցուռ գըլուխ ելնե՛նք։

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած։
Ցայակ եռ առել,
Սե՛ւիկ ջան,
Ցայակդ առաւել։

Մի՛ր տուր, հա՛ ծրենք,
Կարմի՛ր խրնձորտուն,
Հացն եկաւ ուտե՛նք։

Հողը սևանայ,
Մի՛րան ջան,
Ուրըդ հովանայ։

Հորերն ելաւ,
Բէհի՛, ա՛յ լալիկ հոտաղ,
Առաւելն ելաւ։

*Օրհնեա՜լ է Աստուած,*
*Յիշեա՜լ է Աստուած։*
*Կերա՛նք կըշտացա՛նք,*
Փառք Իրան.
*Աստուած գոհացա՛նք։*

*Մաճկալ ջա՛ն, վարէ,*
Սեր, մածուն կերար,
*Արտը շատ քար է։*
*Եւ հերկի՛ն աշէք,*
Մուկն ի բերան մրկանուոր,
*Ա՛յ եզ՛ներ, քաշէք։*
*Ա՛յ տոտուել ա,*
Սի՛րուն ջան,
*Ճալակդ տոտուել ա։*

*Օրհնեա՜լ է Աստուած,*
*Յիշեա՜լ է Աստուած։*
*Ա՛յ պապիս գութա՛ն,*
Աստծու բան,
*Ակօսիդ ղուրբա՛ն։*
*Դէ՛, գոմշի ճուտ ես,*
Ծաղիկ եզը,
*Ա՛յ, ճիպոտ կուտես։*

Ճակատըդ ծանր ու,
Անունի՛դ մեռնեմ,
Թէլերըդ շատ մանր ու
Դարձէք այ Թևին,
Ա՛յ խարգանոսուն,
Ձեռ արէք Մեհին.

Օրհնեա՜լ է Աստուած,
Յիշեա՜լ է Աստուած.

Ակը խորին է,
Ծըլկլոս, Նըլկլոս,
Ձորի փորին է։

Վեր քաշի, հանող. —
Ա՛նուշ ջան,
Ծընչալուդ մատաղ։
Եսակը ըծենք,
Հոտոմե՛լ տուէք,
Միջակը ըցենք։

Միջակը հանենք,
Ա՛յ ամոլուար,
Դու թանից պըրծնենք.

Օրհնեա՜լ է Աստուած,
Յիշեա՜լ է Աստուած։
Րիկնահովին է,
Որն անցաւ.
Գոմշի գովին է։
Ամպը հով արտւ,
Դէ՛, քաղկ'է,
Ցողը ծով արտւ։
Այրի հոտաղը,
Քըփ՛, ա՛յ տղայ,
Մորթենք մատաղը։
Հոռովելը տանք,
Ա՛յ կարմիր գլուխ,
Առաւել գորս գանք։

Օրհնեա՜լ է Աստուած,
Յիշեա՜լ է Աստուած.
Վարենք մատաղի,
Խերն ու բարին մեզ.
Զարկա՛մ կատաղի։
Ակօսն ունի ա,
Ա՛յ տափը ճրղի,
Մաճկալ խօսքի ա։

Հառավել տուէք.
Ա՛յ մուրտարտուն,
Զարկած՝ փախցրրէք։

Երթա՛, հա՛, երթա՛,
Մրռրճչոցիդ մասաղ,
Գութանը երթա։

Օրհնեալ է Աստուած,
Յիշեալ է Աստուած։
Սարին հովել է,
Ազրի՛ օրակար,
Տէրը գովել է։

Աստըծուն փառք տանք,
Մա՛նկալ ջան,
Գութանը թո՛ղ տանք։

Օրհնեալ ես, Աստուած,
Փա՛ռք Քեզ, փա՛ռք,
Յիշեալ ես, Աստուած։

Օրհնի մեր գութան,
Աստըծու բան,
Օրհնեալ է մեր բան։

### 5

*Սառ ու կէս կորեկ ունիմ ցանելու համար,*
Ցանելու համար.
*Ծընձուղներ ժողվան եկան ուտելու համար,*
Ուտելու համար.
*Կըղուայ քար առայ գետնէն զարնելու համար,*
Զարնելու համար.
*Թռան, գացին բերդի տանիս գանգատելու համար,*
Գանգտելու համար.
*Ղասաբներ ժողվան եկան մորթելու համար,*
Մորթելու համար.
*Պառաւներ ժողվան եկան փետրելու համար,*
Փետրելու համար.
*Ներհարսներ ժողվան եկան դեղմաչկի համար,*
Դեղմաչկի համար.
*Աղջիկներ ժողվան եկան դեղդըրի համար,*
Դեղդըրի համար.
*Երէցներ ժողվան եկան օրհնելու համար,*
Օրհնելու համար.
*Ըռեսներ ժողվան եկան խորվածի համար,*
Խորվածի համար.
*Համբաներ ժողվան եկան գովելու համար*
Գովելու համար.
*Ազարներ ժողվան եկան թամաշի համար,*
Թամաշի համար։

Ա՛յ ճրճնղիկ,
Կարմիր տոտիկ,
Սիպտակ փորիկ,
Ոսկեն կրծիկ,
Խըմեն ջըրիկ,
Առուի եզրիկ,
Գըտիկ — մըտիկ,
Փախչեն, երթան
Ման գալու համար։

Կոտ ու կէս գարի ունիմ ցանելու համար.
Տունը մէկ վեցկի տուէք վարելու համար.
Տունը մէկ մըշակ տուէք ցանելու համար.
Տունը մէկ մանկեռ տուէք տափելու համար.
Տունը մէկ ջըրկալ տուէք ջըրելու համար.
Տունը մէկ մանգաղ տուէք քաղելու համար.
Տունը մէկ հընձուոր տուէք հընձելու համար.
Տունը մէկ մըշակ տուէք կապելու համար.
Տունը մէկ մըշակ տուէք բարդելու համար.
Տունը մէկ հաչակ տուէք դիզելու համար.
Տունը մէկ սէլուոր տուէք կըրելու համար.
Ծընծուղներ չըլնի ցըրուեն ուտելու համար։

Ա՛յ ճրճնղիկ, եւայլն։

Կատ ու կէս ցորեն ունիմ կալսելու համար.
Տունն երկու ջորջառ տուէք ծեծելու համար.
Տունն երկու եզը տուէք լծելու համար.
Տունն երկու քառէչք տուէք էրնելու համար.
Տունն երկու մաղ ժողվեցէք մաղելու համար.
Տունն երկու մարդ ժողվեցէք չափելու համար.
Տունն երկու ջաղաց տուէք աղալու համար.
Տունն երկու տաշտ ժողվեցէք խմորելու համար.
Տունն երկու կրնիկ տուէք հունցելու համար.
Տունն երկու թոնիր տուէք թրխելու համար.
Տունն երկու մարդ ժողվեցէք ուտելու համար.
Ճրնճուղներ չըլնի ժողվեն ուտելու համար։

Ա՛յ երննդիկ.
Կարմիր տոտիկ.
Սիպտակ փորիկ.
Ոսկեն կոտիկ.
Խըմեն ջրիկ.
Առուի եզրիկ.
Պոտիկ—մոտիկ.
Փախչեն երթան
Ման գալու համար։

6

Կայնել եմ՝ գալ չեմ կարող,
Լըցուել եմ՝ լալ չեմ կարող.
Քանի որ գընացել ես,
Եա՛ր ջան,
Անուընդ տալ չեմ կարող։

Աչքերըս ճամբիդ մընաց,
Խելքըս ինձանից գընաց.
Քո սիրուն, իմ գըլխի տէր,
Եօթն օր մընացի քընած։

Լալուարայ ջուրը սառն ա,
Օտարութիւնը դառն ա.
Տունըդ դարձիր, իմ աղբէր,
Բոլորըս սըրտիկ դառն ա։

Է

Բարձըր սարերու հովիկ
Վա՜յ իջել դըռնովն է ծեծել.
Նորուկ ջահելուկ հարսնուկ
Գիտցել թէ յարիկն է դարձել։

Զարթնել է ու վեր ելել.
Ու իջել դըռնովն է բացել.
Տեսել, որ իր մարդը չէ,
Մոլորել ու ետ է դարձել։

Կեսրակը հարցմունք արել.
«Հարսնուկ, քո ծըտեցդ է ցաւել»։
—Մա՛յրիկ, քո որդուդ սիրուն
Իմ ամեն տեղիկս է ցաւել։—

«Մի լար, մի ողբըրիր, հա՛րսնուկ.
Գիր կանեմ, որդիս կըբերեմ»։
—Գիր անես, որդիդ բերես՝
Աստըծու լուսուն տիրանաս.
Գիր չանես ու չըբերես՝
Կանիծեմ ու քար կըդառնաս։

## 8

Արօրն ասաց տատրակ հաւքուն.
«Ինչի՞ կու լաս կուց կուց արիւն,
Երթայ լըցուի բարակ առուն։

Տատրակն ասաց արօր հաւքուն.
«Գընաց գարուն, եկաւ աշուն,
Կըտրաւ ջըրիկ աղբիւրներուն,
Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,
Կըտրաւ ձէնիկ կաքաւներուն.
Էնքան պիտի լամ երերուն,
Արիւն կաթէ իմ աչքերուն,—
Ես ի՞նչ անեմ իմ ձագերուն»։

Ասաց. «Դու մի լա էս աշուն,
Չէ՞ վաղ կու գայ բարի գարուն,
Լոյս կը բացուի վեր աշխարհուն,
Դուռն կը բացուի խեղճիկներուն.
Ես քեզ կառնեմ իմ թեւքերուն,
Թըռնեմ բանձրիկ վեր ծառերուն,

*Տանեմ, հանեմ՝ վեր սարերուն,*
*Բուն կը դընեմ՝ մէջ քարերուն,*
*Տուն կը շինեմ՝ մէջ գաղերուն,*
*Երթիկ բանամ՝ դէմ հով քամուն,*
*Թոնիր թաղեմ՝ մէջ այրերուն,*
*Ծուխ կը հանեմ՝ հետ ամպերուն, —*
*Մեր ցաւ կը տանք հարաւ քամուն։*

*Դընաց աշուն, եկաւ գարուն,*
*Կաթէր ջըրիկ աղբիւրներուն,*
*Երթար, ըլցուէր բարակ առուն.*
*Աղըրանց-արին մէջ քարերուն,*
*Դեղին սուսուն վեր սարերուն,*
*Փունջ մանուշակ մէջ ձորերուն.*
*Կանաչ կարմիր գոյն գոյն ծաղկունք,*
*Դաշտերն ամեն էրունք, թըռչունք.*
*Ձէնիկ կու գայ գառնիկ, մաքուն, —*
*Մեր ապրելիք վեր Աստըծուն։*

## Դ

*Ամպել ա, ձիւն չի գալի,*
*Մըթնել ա, տուն չի գալի.—*
*Հեռու ճանապարհի ես,*
*Աչքերիս քուն չի գալի.*
Կանչում եմ, կանչում եմ, եա՛ր, արի՛, եա՛ր,
Մութն ընկաւ, տո՛ւն արի, անջիգեա՛ր եար։

*Էս գիշեր կանցնի դըժուար,*
*Կերթայ բարակ ու երկար.*
*Իմըս որ ախ ու վախով,*
*Քոնըդ ինչպէս կանցնի, եա՛ր։*

*Ձորերս ի վեր հանդեր ա,*
*Ջուրը տունըս քանդեր ա.*
*Ծուռ արա, յետ դարձիր, եկ.—*
*Սիրածըդ տանն անտէր ա։*

## 10

Պարտքով կովը ծախեցին,
Եա՛ր, եա՛ր.
Ձմեռ օրին բուռնուցին.
Եա՛ր, եա՛ր.
Ընկել եմ սար սար
Ինչպէս խելագար.
Բուռնուց պատէն կախեցին,
Եա՛ր, եա՛ր.
Մուրհակն ընկաւ մեր վըզին.
Եա՛ր, եա՛ր.
Ընկել եմ սար սար
Ինչպէս խելագար:

Ձիւնն եկաւ, գետինն առաւ,
Կեսարայրս պարտքով մեռաւ.
Ես պըղտորիկ, եարըս պըղտորիկ,
Հոգսը միտքը մեզ տարաւ։

Սիրտըս լըցուել ա կըրակ,
Ինձ ազատէք, թէ կարաք.
Թէ չէ՝ էգուց էս ցաւից
Ես կը մեռնիմ անդամանակ։

## II

Ղարիբ եմ՝ Կարս գընացի,
Ղարիբ տեղ հարս գընացի.
Մա՛յրիկ ջան.
Փըրթուց ես որ չըտեսայ,
Անկեսուր հարս մընացի.
Մա՛յրիկ ջան։

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբութիւն դըժուար ա.
Աստուած սիրէք, բան չասէք,
Ղարիբն էս ի՞նչ անճար ա։

Ես ղարիբ եմ՝ ջուր չըկայ,
Սարերին աղբիւր չըկայ.
Վախենամ՝ ղարիբ մեռնեմ,
Վըրէս մէր ու քուր չըգայ։

Սև եմ, սևաւոր հաւք եմ,
Դեղին թևաւոր հաւք եմ.
Ինձ մի բաց թողէք, թըռչեմ,
Երամի սովոր հաւք եմ։

## 12

Ես աղջիկ եմ, հէր չունիմ,
Վա՜յ, լէ, լէ, լէ՜, լէ, լէ, լէ՜, լէ, լէ, լէ՜.
Մի սրտացաւ տէր չունիմ.
Վա՜յ, լօ, լօ, լօ՜, լօ, լօ, լօ՜, լօ, լօ, լօ՜.
Հօրից, մօրից զրկուած՝
Վա՜յ, լէ, լէ, լէ՜, լէ, լէ, լէ՜, լէ, լէ, լէ՜.
Աշխատող աղբէր չունիմ.
Վա՜յ, լօ, լօ, լօ՜, լօ, լօ, լօ՜, լօ, լօ, լօ՜։

Ղարիբ հաւքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի.
Ինձ նման սևաբախտը
Աշխարհքումըս ինչ ունի։

Ծագեց արևը սարէն,
Կանչեց կաքաւը քարէն.
Սիրածս էլ ա ինձ տուէր.
Լաւանայ սրտիս եարէն։

## 13

*Այգիկ եմ տանը դրած,*
*Արծաթ եմ ոսկեջըրած.*
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ.
*Հօրն ու մօրըս ինչ սահմ,—*
*Ճակատիս էս ա գրած.*
Սիրել եմ, առնում եմ սիրատէրըս,
Առնում եմ, չի տալիս անսիրտ մէրըս.

*Սիրել եմ սիրեկանըս,*
*Սիրել, մընացել տանըս.*
*Ա՛հ տրա, երկիւղ տրա,*
*Մի էրի չիւան ջանըս.*

*Մի ծառ ունիմ՝ ծիրանի,*
*Քամին տերև կը տանի.*
*Քամի, ինձնից արի, տար,*
*Անուշ եարիս մատանի.*

*Մատանի ոսկեջըրած,—*
*Ա՜յ տըղայ, դու ինձ դրած.*
*Պատճառին ինչ մեղք ունի,*
*Եա քո սիրով շըղթայած.*

### 14

Հարբել եմ ու չեմ գինով,
Ես կայրեմ ու չեմ կրակով։

Հագել եմ սիրու շապիկ,
Աղուորի դուռը կայնելու։

Աղուորն ալ ներսէն ի դուրս,
Ծոցը լի կարմիր խնձորով։

Ասի՝ թէ հատ մի առնեմ,
Թունդ ելաւ թուխ աչքը լալով։

Լացաւ ու լալով ասաւ.
«Եա՛ր, ինձ խաղք արիր ցերեկով.

«Բռնեցիր զոռով ձեռով,
Պագ արիր հազար նազերով.

«Այն մէկ ցերեկուան պագը,
Որ կարժէ հազար գիշերուան»։

**15**

*Ա՛յ աղջիկ, ծամո՛վ աղջիկ.*
Վ.ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
*Ճաքարից համով աղջիկ.*
Ընջաւոր, փրնջաւոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ, համով աղջիկ.
*Ունքերըդ խելքըս տարաւ,*
Վ.ա՛յ, խելքըս տարաւ,
*Թուխ աչքերըդ ծով աղջիկ.*
Ընջաւոր, փրնջաւոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ, համո՛վ աղջիկ:

*Կապել ես քիրման գօտիկ,*
Վ.ա՛յ, քիրման գօտիկ,
*Մարդ չես թողնում քեզ մօտիկ.*
*Տեղքով ես, համով, հոտով,*
Վ.ա՛յ, համով, հոտով.
*Քան ըղծաղիկ խօրոտիկ:*

*Գըլուխըդ բարձըր բըռնի,*
Վ.ա՛յ, բարձըր բըռնի,
*Ճէկ տըղէն քեզի մեռնի.*
*Ինձի տան արար աշխարհը,*
Վ.ա՛յ, արար աշխարհը.
*Ես ուրիշին չեմ առնի:*

## 16

*Սափորըն ուսիս դըրի,*
Ջա՛ն, Նարօ՛ ջան.
*Երթամ աղբիւրը ջըրի.*
Ջա՛ն, Նարօ՛ ջան.
*Ինչ փուշ գայ իմ ոտքիը,*
Ջա՛ն, Նարօ՛ ջան.
*Ջուր աչքի սըրտով խըմի։*
Ջա՛ն, Նարօ՛ ջան, ջա՛ն, Նարօ՛ ջան.
Ես սիրեցի, ես առայ։

*Արեւը մէրը մըտաւ,*
*Միրանը տէրը գըտաւ.*
*Օտարի վատ խօսքերը*
*Իրանց սըրտի մէջ փըտաւ։*

*Աշխարհի մէջ տէր ունիմ,*
*Եարիս վըրայ սէր ունիմ.*
*Ճակատը բաց՝ խօսքի տէր,*
*Ինձի պահող հէր ունիմ։*

## 17

Հօ՛դալլօ, ջա՜ն, հօ՛դալլօ, ջա՜ն, հօդալլօ,
Աղջի՜կ սիրուն, աղջի՜կ անուշ, դալալլօ։

*Կայնել ես աղբերակին,*
Հօ՛դալլօ, ջա՜ն, հօ՛դալլօ.
*Շող կը տաս արեգակին.*
Դա՛լալլօ, ջա՜ն, դա՛լալլօ.
*Քո շող երեսին մեռնեմ,*
Հօ՛դալլօ, ջա՜ն, հօ՛դալլօ.
*Ունքերիդ աղեղնակին.*
Դա՛լալլօ, ջա՜ն, դա՛լալլօ։

*Մազերըդ ոլորել ա,*
*Աչքերըդ բոլորել ա.*
*Երկ՛օր ա, չէի տեսել,*
*Իմ՝ սիրտը մոլորել ա։*

*Փող ես ուզում, քեզ փող տամ,*
*Ոսկի տամ, ոչ թէ հող տամ.*
*Թէ դըրամն էլ հաւան չես,*
*Հոգիս հանեմ, քեզ փոխ տամ։*

## 18

Խընձոր ունիմ կըծած ա,
Ձորս բոլորն արծաթած ա,
Ափներում մեխակած ա,
Մէջը ոսկով լըցած ա։

Մէրիկս ուզեց, չը տըւի,
Հէրիկս ուզեց, չը տըւի,
Աբէրս ուզեց, չը տըւի,—
Անուշ եարի դըրկած ա։

## 19

Էս առուն ջուր է գալի,
Մի տեռէր-ձոր է գալի.
Հէ՜յ, գալիս է, նէ՜յ, սէր անէ.
Գէնին մահանա արել,
Իր եարին հիւր է գալի.
Հէ՜յ, գալիս է, նէ՜յ, սէր անէ.

Վարդ եմ՝ քաղել մաղերում,
Վէր եմ՝ դրել շաղերում.
Արի, ին՝ սիրեկան եար,
Առաջ գամ՝ քեզ տաղերում.

Տանըս առջին կայ նըռնի,
Ես բարձ բերեմ՝ դու կըռնի,
Ես դու մի բաղում՝ պխանենք,
Դու չինարի, ես նըռնի.

## 20

*Առաւօտ լոյս մըտաւ արտ,*
Վա՛խ,
*Աչքըս տարաւ, եղաւ դարդ.—*
Վա՛խ.
*Կու ՚նըմանն էր քաֆուր վարդ.*
Վա՛խ.
Լո՛րիկ լոր, լո՛րիկ լոր, լո՛րիկ լոր, լո՛րիկ,
Կանանչ լորիկ, կարմիր լորիկ,
Անուշ լորիկ, սիրուն լորիկ,
Վառ վառ լորիկ, լորիկ լորիկ,
Լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լորիկ։

*Առաւօտ բարի լուսուն,*
*Ես մայիլ եմ՝ քո տեսուն,*
*Լորիկ, դու իմ՝ սըրտի սուն.*

*Առաւօտ բարի լուսուն,*
*Քո խալան հարիւր յիսուն,*
*Համրի՛ դն՛ի վեր քառսուն.*

## 21

*Եօթն օր, եօթ գիշեր*
*Ծաղկանն ի գօտիս թոռմըշեր,*
*Եար մեղիկ դըռնէն չ՚ելներ,*
*Փըշուր մի սիրտ մեղիկ հօմնէր։*
Վա՛յ. լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛։
*Եարսի խռովաւ,*
*Ծաղկամ՝ թոռոմաւ.*
*Հովիւ խըռովաւ,*
*Ոչխար մոլորաւ.*
*Բերուոր չիւարաւ.*
*Կըթոց գըլորաւ։*
Արի՛, եա՛ր, արի՛, խրռով մի՛ կենա,
Աստուորիս բան ծի, են չի՛ մրնա:

*Առնեմ՝ ըղղամբուրէս,*
*Ելնեմ՝ քու մամու երդիս,*
*Ձիմ՝ կաքուու ձէն լըսեմ,*
*Անուշ քընէդի զարթիս։*

Բոստան եմ դըրսե
Վերև էն գարին.
Աստուած չէն պահէ
Էս տարուան տարին.
Նամամ' մի չեղաւ.
Ուղարկեմ' եարին.
Արի՛, եա՛ր, արի՛, խըռով մի՛ կենա,
Աստուածս բան ծի, ես չի՛ մընա։

Աղջի՛, երեցայ քու դարդէն,
Գամ ՚ըռտիմ քու հէրանց բաղչէն,
Էնքան զարնեմ, էնքան ասեմ,
Ջուր հայի մեջ, թափի իմ ջանէն։
Արթուն, թէ քընած.
Ընկել եմ' քու փէշ.
Խօսերըս շատ են,
Մի անիր ինձ դէշ.
Կը մեռնիմ' օխտովդ.
Կը տեսնես իմ' լէշ։
Կանչեմ եա՛ր, արի՛, — եարիկ ձէն չի՛ տայ,
Ընկեր քաղցր քուն. անուշն կը չի տայ։

## 22

*Էսօր քեզ տեսով ինձ էնքան են զարկած,*
*Ձիմ արփին ղըզած բամբկով են բըռնած.*
*Հում աբըրշումով վէրքերս են կարած,*
*Նաբաթ շաքարով խոցերս են քաղած.*
Վա՜յ, լօ՜, վա՜յ, լօ՜, վա՜յ, լօ՜, վա՜յ, լօ՜.
*Երթամ պըղտի գեղ,*
*Առնեմ՝ նուկիմ՝ եղ,*
*Իմ եարի համար*
*Անեմ՝ ձուածեղ.*
*Տանեմ՝ հավլուն,*
*Ձի չը գ-րնի մեզ.*
Արի՛, եա՛ր, արի՛. խռովմի՛ կենա,
Աստուծի քանի ձի, ես չի՛ մընա:

*Ինչ իմ աչքընկա քու կարմիր երեսաց,*
*Էնպէս՝ ինչ վարդ. ոսկեհան մեր ձի չեն*
*շարժած.*
*Դու արի մէկ պագ տու կարմիր երեսաց,*
*Թող զարկած եղնին ինձի թամամած.*

Էրի՜ն, էրերի՜ն
Աշխար մեր բերի՜ն.
Կըթե՛նք թուխ մաքի՜ն,
Լըցե՛նք սուրահի՜ն.
Խորոված գինով
Ուղարկե՛նք հայրի՜ն.
Արի՛, հա՛ր, արի՛, խըռով մի՛ կենա,
Աստուծի բանն ա, էն չի՛ մընա:

Տըղա՜յ, դու, մի՛ փախի,
Վաղ եմ կերթամ' իմ' հէրանց բաղչէն,
Դու արի, եմ մէկ պագ տամ' քեղի,
Ես քո տըղայ սիրտ ինձնէ չեմ' թօղկի.
Իմ' հէրանց իգին
Վարդ հազար թուփ.
Մէջ էն վարդերուն
Իմ' վարդն է քաֆուր.
Ճան բըլբուլն իջաւ
Վեր իմ' վարդին հիւր.
Արի՛, հա՛ր, արի՛, խըռով մի՛ կենա,
Սուտ, փուչ աստուր ա, էն չի՛ մընա:

## 23

Աղջի՛կ դու հուր ես-մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես.
Էս Համբարձման գիշերը
Քեզ ման կը գամ, դու ո՞ւր ես։

Խնձորը գլորել եմ,
Ճամբիցը մոլորել եմ.
Երեք սարի միջավար
Քեզ վըրայ սովորել եմ։

Ամպաշող լուսնի նման
Լող անելով կը գաս ման.
Ի՛մ պայմանը քեզ հետ է,
Դու ե՞րբ կը տաս քու պայմանն։

Սարն առնեմ՝ ձեռըս՝ քարեմ,
Գամ՝ ձեր դըռանը չոքեմ.
Ըլնի թէ էս հընարքով,
Քեզ էնտեղից ես պոկեմ։

## 24

*Զի՜նչ ու զի՜նչ տամ լողուորչուն.—*
Զումա զումա եր։
*Զիմ լաչակ տամ լողուորչուն.*
Բումա բումա եր։
*Ո՛չ էառ, ոչ հաւնեցաւ,*
Զումա զումա եր.
*Ո՛չ եհան, ծամկալ ծոմէն.*
Բումա բումա եր։

*Զի՜նչ ու զի՜նչ տամ լողուորչուն.—*
*Զիմ մէջկապ տամ լողուորչուն.*
*Ո՛չ էառ, ոչ հաւնեցաւ,*
*Ո՛չ եհան ծամկալ ծոմէն։*

*Զի՜նչ ու զի՜նչ տամ լողուորչուն.—*
*Զիմ չափիկ տամ լողուորչուն։*
*Ո՛չ էառ, ոչ հաւնեցաւ,*
*Ո՛չ եհան ծամկալ ծոմէն։*

*Զի՜նչ ու զի՜նչ տամ լողուորչուն.—*
*Լուսնակ գիշեր պագ մի տուրի.*
*Հետ էառ, հետ հաւնեցաւ,*
*Հետ եհան ծամկալ ծոմէն։*

25

*Կիրակնամուտ* ակիրակմուս, *խրախունը*, խրախունը
*Սուրբս եկաւ մեր տանը.*
Սուրբս եկաւ մեր տունը.
*Խոլմաթ չէր,* խոլմաթ չէր. *Ընտեղ մեզի,*
Ընտեղ մեզի,
*Արտել ենք հաւատարմը,*
Արտել ենք հաւատարմը:

*Առել եմ ձեռքս փունջը,*
*Թող եմ կապել էս քունջը.*
*Որ պատռեն, թերթս տանեն,*
*Ես չեմ տանի էն մունջը.*

*Հաւատացին խնձ տան ունիմ,*
*Մէջը տակէ տան ունիմ,*
*Պաղին ու.— պատոկի մանջը.—*
*Ես բրբռոցի քան ունիմ.*

## 26

Թաւրիզու ճամբէն գուգ ու,
Սոր ամա՛ն, ամա՛ն, ամա՛ն, ամանն է՛յ,
Ո՛վ ամա՛ն, ամանն է՛յ, ո՛վ ամա՛ն.
Անտան կայնեք՝ Աշխէն կուգայ.
Խորոս և Աշխէնը,
Կոյոս և Աշխէնը։
«Ինձ պէս արդէն քեզի հետ
Սոր ամա՛ն, ամա՛ն, ամա՛ն, ամանն է՛յ,
Ո՛վ ամա՛ն, ամանն է՛յ, ո՛վ ամա՛ն.
Աստուած վկայ. յա կըսադայ»
Խորոս և Աշխէնը,
Կոյոս և Աշխէնը։

Մարգարի դուռը դուռ ու,
Աշխէն կայնեք՝ Անտոն կուգայ.
«Երկու հարիւրն ինչ անէ.
Իմ հերը շատ բաշխեղ կուգայ.

«Կաղերի սուր փռչերը.
Հերիք պատոնն իմ փէշերը.
Թանի մ՚իտամ՝ ես դերի.
Արի, ինձի առր դէշերը»

## 27

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Սարիս ձունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Սարըս քամարով լինի.
Դէ, թըռէ՛ք, թըռէ՛ք, հողը հանենք,
Մեր թշնամու դողը հանենք:

*Ծաղիկ ես ծաղկանց միջին,*
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
*Մի հատ ես աղջկանց միջին.*
Սարիս ձունը ծո՛վ լինի.
*Եա՛ր, ինձ պարզերես արա,*
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
*Իմ ընկեր մարդկանց միջին.*
Սարըս քամարով լինի:
Դէ՛, թըռէ՛ք, թըռէ՛ք, հողը հանենք,
Մեր թշնամու դողը հանենք:

Արի՛, մի փամթղար խաղա՛նք,
Տը՛նկող մը՛նա՛նք, չը կաղա՛նք.
Հարսանիքիդ ալիւրը
Մուղնու ուխտից վաղ աղա՛նք։

Իրար հետ բաղը դը՛նա՛նք,
Ուտե՛նք, խըմե՛նք, լիանա՛նք.
Թըշնամու աչքը հանե՛նք,
Մեր Աստըծուց գոհանա՛նք։

## 28

Խումար պառկե երեսբաց,
Հո՛պ, հո՛պ, հոպպըրտա՛, դըմբա՛,
Դեղին կարպետ, ըմբուլ բարձ.
Հո՛պ, հո՛պ, հոպպըրտա՛, դըմբա՛,
Հե՛յ, հե՛յ, լա՛ւն է. հե՛յ, հե՛յ, լա՛ւն է,
Հե՛յ, հե՛յ, լա՛ւն է, հե՛յ, հե՛յ, լա՛ւն է.

Անուշ քընե երես բաց,
Սահակին եկաւ խելք գընաց.

Հաջոնց բակին էր շալդ-ըրմա,
Աչնան թոխլին զաւուրմա.

Խարար տարէք ըռնեսին.
Աղջիկ բերէ վեր մըսին:

Հաւարն ընկաւ ըռնեսին,
Դեադէք թափան վեր մըսին.

Հէրօն ուտէր, գիրանար,
Մըկօն խըմէր, ուրխանար.

Հաջո՛նց կալը բոլորպար,
Թումար մէջը կը խաղար։

Ծամեր թալուկ իւր յետև,
Կը թըռվըռէր շատ թեթև։

«Հաստա՛տ մընայ մեր Հաջին,
Որ պահէ մեր նոր փեսին»։

Գարնան բացուեց նոր լալա,
Թումար բերեց ջուխտ բալա։

Աչքըդ լոյս, Հաջի՛ աղա,
Թոռներուդ հալալ արա։

## 29

Մայրիկին եազմա բերին,
Քոյրիկին փուշի.
Հայրիկին փոստէ փափախ,
Կատար չունենայ։

Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն։

Մաշիկո՛վ աղջիկ,
Կօշիկո՛վ աղջիկ.
Քու դէյրէն կարճ է,
Ճէկ տըղի խարճ է։

Մայրիկին լաւա կըտրեցին,
Քոյրիկին խըրխա.
Հայրիկին սալդաթի շինել,
Թեւեր չունենայ։

Մայրիկին կօշիկ բերին,
Քոյրիկին տուֆլի․
Հայրիկին ջուխտակ չարուխ,
Տակ էլ չունենայ։

Մայրիկին փայտոն բերին,
Քոյրիկին կառետ․
Հայրիկին Տլոտի կաչկայ,
Ակեր չունենայ։

## 30

«Աղջի՛, արի՛, քե փա՛ս առնեմ,
Յասի բոլոր ոսկի շարեմ»։

—Չեմ՛ ուզի, դա՛դօ, չեմ՛ ուզի, բա՛բօ,
Դարդիցըս խաբա՛ր տուր, բա՛բօ։

«Աղջի՛, արի՛, դալմա առնեմ,
Դալմի բոլոր սուրմա շարեմ»։

—Չեմ՛ ուզի, դա՛դօ, չեմ՛ ուզի, բա՛բօ,
Դարդիցըս խաբա՛ր տուր, բա՛բօ։

«Աղջի՛, արի՛, ջըզմա առնեմ,
Ջըզմի բոլոր նալչա զարնեմ»։

—Չեմ՛ ուզի, դա՛դօ, չեմ՛ ուզի, բա՛բօ,
Դարդիցըս խաբա՛ր տուր բա՛բօ։

*«Աղջի՛, արի՛, քե տամ՝ քաղաք,*
*Նըստես ու կայնես խանըմ՚ակ»։*

*—Ձեմ՝ ուզի, դա՛դօ, չեմ՝ ուզի, բա՛բօ,*
*Դարդ-իցըս խաբա՛ր տուր, բա՛բօ։*

*«Աղջի՛, արի՛, քե տամ՝ Հալիւր,*
*Եւ Ցարօյին մաղես ալիւր»։*

*—Հա՛, դա՛դօ, ջա՛ն, բա՛բօ,*
*Դարդ-իցըս խաբա՛ր տուր բա՛բօ։*

Տա՛, Յա, Յա՛, զո՛ ես էլ կերթամ,
Տա՛, Յա, Յա՛, ողորմի՛ քո հոր։

**31**

Իմա՞լ էնեմ, իմա՞լ էնեմ, իմա՞լ էնեմ,
Սարեր ձիւն ա, շիւարել եմ,
Եար պըզտիկ ա, մոլորել եմ։

*Եամա՛ն, աղէ, դու՛ն արեցիր,*
*Էս քոռ գեադին ո՞ւստ ճարեցիր.*
*Թամա՛հ արիր հարիւրնոցին,*
*Ինձի տուիր դըրկանոցին։*
Իմա՞լ էնեմ եւայլն։

*Ես ի՞նչ կանեմ՝ հայլի դանակ,*
*Մի եար չունիմ՝ անեմ հանաք.*
*Ես չեմ՝ ուզի քամար, մըղնոց,*
*Էրիկ կուզեմ, ցրուի իմ խոց։*

*Քեզի մեռնեմ, խաթո՛ւն կեասուր,*
*Քո ծուռ լաճուն խըրատ մի տուր.*
*Չերթայ, պառկի գոմշի մըսուր,*
*Չինար բոյխ ի՞նչ կայ խըռուր։*

Կեսօրն աղա, արեւդ սիրես,
Էսօր երթաս հիւաններ բերես,
Որ քո լաճուն օրրոց չինես,
Մէջը դընես օրօրս ասես։

Խաթո՛ւն կիտուր, շուտ վե՛ր ելի,
Գընա՛, փոկէ մի մաղ ճարի,
Որ իմ էրկան հող 'տի մաղեմ,
Իրկուն եյաւ, տակը դընեմ։

Իրկուն եյաւ ճըրագ կըպոց.
Պըզտիկ էրիկս դընեմ օրրոց.
Կըտրիճ չունիմ, որ տեղ ձգեմ,
Երկէն գիշեր քաղցրիկ խօսեմ։

Գիշեր մութ ա, սարեր մըժ ա,
Էրիկ ունիմ մատղաշ ճիժ ա.
Գիշեր չուր լուս կը վըժվըժայ,
Մարդու ականջ կը դըժդըժայ։

Էս իրիկուն կիրակմուտ ա,
Էրիկ ունիմ հաւի ճուտ ա,
Կը ճըվճըվայ, կը կըտկըտայ.
Տարէք դոմը, թող կուտ ուտայ։

*Էրիկ ունիմ գեղին-մեղին,*
*Ով որ տեսնէ պատուի լեղին.*
*Ձեռնէն բռնեմ, տամ գըրողին,*
*Թողնեմ, երթամ հետ սիրողին։*

*Իմա՞լ էնեմ ես քու դարդէն,*
*Իմ երեսիս պատառու փարդէն.*
*Նոր եմ ելել եարիս մօտէն,*
*Ձըկըշտացայ համ ու հոտէն։*

*Իրիկունը բերի գալիս ա,*
*Բերի ղաղան թեւէս կախ ա.*
*Եկան ասին՝ էրկան մախ ա,*
*Աչքըս կուլայ, սիրտս ուրախ ա։*

**32**

Դու կայնել ես ընտրական,
Հէ՛յ, Եա՛րէ,
Եկաւ ծանրիկ բազիրկան.
Հէ՛յ, Եա՛րէ.

Հայլի առի չող եր՛սիդ,
Սանրիկ առի չէկ վարսիդ.

Գընեցի ջուխտ մի մարջան,
Վառ վառ թըշերուդ ՚նըման.

Ջուխտ մի ջըղմէ ոտներուդ,
Մաշկիկ մի դեղ աչերուդ.

Գացիր, նըստար ծառին հով,
Դեղիր զաչերդ ընկուերով.

Մազերդ հիւսած շարաընակ,
Թողիր յետեւդ փըրդանակ.

Ծամերէդ կախ ջուխտակ պուխ,
Մէջն ըսպիտակ, դուրսն էր թուխ։

Գըլուխդ սուրմա, արաղչի,
Ականջդ ոսկի կախեցի։

Կանչուն ճեռը մարթեցի,
Քալաճին քեզ կերուցի։

Ճեռն էր երկու փարայի,
Երկու ոսկու գընեցի։

Ազապ տըղէք քեզ տեսան,
Հացից, ջըրից կըտրեցան։

Եկան, եղան մեզ մըշակ,
Վերցին դըրին քո դոշակ։

Նըստար, կայնար խանըմնակ,
Աստղ ու լուսնի նըմանակ։

Լացիր ու ասիր՝ հէ՜յ, մա՜ր,—
Հազար թափան քո հուար։

Ասին. «Էդ խմալ ձէն ա,
Էդոր ձէնից ես մեռայ»։

## 33

*Ելէ՛ք, տեսէ՛ք, ո՞րն է կերել մեր թուփ․*
Ո՞րն է կերել մեր թուփ․
*Ելա՛ն, տեսա՛ն՝ ա՛յն է կերել մեր թուփ։*
Այն է կերել մեր թուփ․
Այն էր բրփուն,
Թուփն էր իգուն,
Իգ Վարագայ,
Տակն ազուգայ,
Վրես կու գայ,—
Հալալ է՝
Զալալ է։
Ի՞նչ բարի տարեկ մ'էլ եկաւ վեր մե,
Գօ վեր մե, գօ վեր մե,
Գօ վեր մե, գօ վեր մե։
Ո՜ւ։

*Ելէ՛ք, տեսէ՛ք, ո՞րն է կերել մեր ուլ․*
*Ելա՛ն, տեսա՛ն՝ գէ՛լն է կերել մեր ուլ․*
Գէլն էր ուլուն,
Ուլն էր բրփուն,
Թուփն էր իգուն, եւայլն․

*Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր գէլ։*
*Ելան, տեսան՝ շունն է կերել մեր գէլ։*
Շունն էր գէլուն,
Գէլն էր ուլուն,
Ուլն էր բրփուն, եւայլն։

*Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր շուն։*
*Ելան, տեսան՝ արջն է կերել մեր շուն։*
Արջն էր մոլուն,
Շունն էր գէլուն,
Գէլն էր ուլուն, եւայլն։

*Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր արջ։*
*Ելան, տեսան՝ փիլն էր կերել մեր արջ։*
Փիլն էր արջուն,
Արջն էր մոլուն,
Շունն էր գէլուն, եւայլն։

*Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր փիլ։*
*Ելան, տեսան՝ մարդն է կերել մեր փիլ։*
Մարդն էր փըլուն,
Փիլն էր արջուն, եւայլն։

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր մարգ.*
*Ելան, տեսան՝ հողն է կերել մեր մարգ.*
Հողն էր մարգուն,
Մարգն էր փըլուն, եւայլն։

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր հող.*
*Ելան տեսան՝ օձն է կերել մեր հող.*
Օձն էր հողուն,
Հողն էր մարգուն, եւայլն.

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր օձ.*
*Ելան, տեսան՝ հաւքն է կերել մեր օձ.*
Հաւքն էր օձուն,
Օձն էր հողուն, եւայլն։

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր հաւք.*
*Ելան, տեսան՝ նետն է կերել մեր հաւք.*
Նետն էր հաւքուն,
Հաւքն էր օձուն, եւայլն.

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր նետ,*
*Ելան, տեսան՝ ժանգն է կերել մեր նետ.*
Ժանգն էր նետուն,
Նետն էր հաւքուն, եւայլն.

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր ժանգ.*
*Ելան, տեսան՝ խուղն է կերել մեր ժանգ.*
Խուղն էր ժանգուն,
Ժանգն էր նետուն, եւայլն.

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր խուղ.*
*Ելան, տեսան՝ մուկն է կերել մեր խուղ.*
Մուկն էր խուղուն,
Խուղն էր ժանգուն, եւայլն:

*Ելէք, տեսէք, որն է կերել մեր մուկ.*
*Ելան, տեսան՝ կատուն է կերել մեր մուկ.*
Կատուն մըկան,
Մուկն էր խուղուն, եւայլն.

*Ելէք, տեսէք, որն է կերել կատուն.*
*Ելան, տեսան՝ փէտն է կերել կատուն:*
Փէտն էր կատուն,
Կատուն մըկան, եւայլն:

*Ելէք, տեսէք որն է կերել մեր փէտ.*
*Ելան, տեսան՝ հուրն է կերել մեր փէտ.*
Հուրն էր փէտուն,
Փէտն էր կատուն, եւայլն.

Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր հուր.
Ելան, տեսան՝ ջուրն է կերել մեր հուր.
Ջուրն էլ ճրուն,
Հուրն էր փէտուն, եւայլն.

Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր ջուր.
Ելան, տեսան՝ պաղն է կերել մեր ջուր.
Պաղն էր ջրուն,
Ջուրն էր ճրուն, եւայլն:

Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր պաղ.
Ելան, տեսան՝ արեւն է կերել մեր պաղ.
Արեւ պաղուն,
Պաղն էր ջրուն, եւայլն.

Ելէք, տեսէք, ո՞րն է կերել արեւ.
Ելան, տեսան՝ ամպն է կերել արեւ.
Ամպն արեւուն,
Արեւ պաղուն, եւայլն:

Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր ամպ.
Ելան, տեսան՝ հովն է կերել մեր ամպ.
Հովն էր ամպուն,
Ամպն արեւուն, եւայլն.

Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր հով.
Ելան, տեսան՝ հով գընացել. հով չը կայ.

Վերջինն ասենք, պըրծընենք.
Մէկ մէկ գաւաթ էլ կոնծենք.

## Հարսանեկան երգեր

### 34

### Ա.

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի քաթան շապիկ պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի մահուդ չուխայ պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի մահուդ շալվար պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի քիրման գօտիկ պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի ջուխտ լաւ գուլբայ պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի ջուխտ լաւ կօշիկ պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի բուխար գըլխարկ պիտի։

Մեր թագւորին ինչ պիտի։—
Մի լաւ խաս փէշքիր պիտի։

## 35

### Բ.

Գացէք, բերէք թագւորամէր,
Որ գայ, նստէ, դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին։
Աստուած շնորհաւո՛ր անէ:

Գացէք, բերէք թագւորահէր,
Որ գայ բանայ դուռ մաղազին,
Հանէ զխաչփոկ նոր, պաչունի,
Բերէ, բաշխէ մեր թագւորին։

Գացէք, բերէք թագւորամամ,
Որ գայ, նստէ, դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին։

Գացէք, բերէք թագւորապապ,
Որ գայ, նստէ, դարբաս անէ,
Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,
Հրամէ բարին մեր թագւորին։

*Գացէք, բերէք թագւորաղբէր,*
*Որ գայ, նըստէ, դարբաս անէ,*
*Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,*
*Հրամէ բարին մեր թագւորին։*

*Գացէք, բերէք թագւորաքոյր,*
*Որ գայ, նըստէ, դարբաս անէ,*
*Ծընրիկ զարկէ սուրբ սեղանին,*
*Հրամէ բարին մեր թագւորին։*

*Գացէք, բերէք թագւորքրաւոր,*
*Քառասուն քիսայ առնէ, բերէ,*
*Այս թագ դընէ, առնէ, տանէ,*
*Բերէ, բաշխէ մեր թագւորին։*

*Գացէք, բերէք կռունկն ի չօլէն,*
*Որ գայ, նըստէ, սէյրան անէ,*
*Ծընկլիկ դընէ սուրբ սեղանին,*
*Աստծու բարին մեր թագւորին։*

*Գացէք, բերէք բադն ի գեօլէն,*
*Որ գայ, նըստէ, սէյրան անէ,*
*Ծընկլիկ դընէ սուրբ սեղանին,*
*Աստծու բարին մեր թագւորին։*

Գացէք, բերէք կուքաւ քարէն,
Որ գայ, նըստէ, սէյրան անէ,
Ծընկլիկ դընէ սուրբ սեղանին,
Աստծու բարին մեր թագւորին.

**36**

Գ.

Օրհնեա՜լ, բարերա՜ր Աստուած,
Կամքն օրհնեալ մեր Արարողին,
Զուգեցինք, հա՜յ, թամամեցինք,
Զխաչն ի վըրէն բազմեցուցինք.

37

Դ.

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գըտակն էր կարմիր,
Արևն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Ծաղիկն էր կարմիր,
Արևն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Չուխան էր կարմիր,
Արևն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Ծաղվարն էր կապոյտ,
Արևն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գօտին էր կարմիր,
Արեն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գուլբան էր նախշուն,
Արեն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Մաշիկն էր կարմիր,
Արեն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գլտակն էր բուխար,
Արեն էր կանաչ։

Մեր թագաւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Կոզբանդն էր կարմիր,
Արևն էր կանաչ։

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Ձիուկն էր հրեղէն,
Թագաւորն էր վըրէն։

## 38

### Ե.

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր,
Որ թագը շուռ գէր.—
Սուրբ Երրորդութին յանձմէ կայնէր,
Որ թագիկ շուռ գէր շուռ ու մուռ,
Բարով իւր տու՛ն գէր։

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր,
Որ թագը շուռ գէր.—
Էջմիածին յանձմէ կայնէր,
Որ թագիկ շուռ գէր շուռ ու մուռ,
Բարով իւր տու՛ն գէր։

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր.
Որ թագը շուռ գէր.—
Սուրբ Կարապետ յանձմէ կայնէր.
Որ թագիկ շուռ գէր շուռ ու մուռ,
Բարով իւր տու՛ն գէր։

Մեր թագուորին ի՞նչ կու պիտէր,
Որ թագը շուռ գէր.—
Լոյս գերեզման յանձմէ կայնէր.
Որ թագիկ շուռ գէր շուռ ու մուռ,
Բարով իւր տու՛ն գէր։

39

Գ.

Մեր թագւորին էլ ինչ պիտէր,
Որ թագը շուռ գէր։—
Թագւորամէր կայնած պիտէր,
Որ թագը շուռ գէր։
Մեր թագւորին էլ ինչ պիտէր,
Որ թագը շուռ գէր։—
Թագւորահէր կայնած պիտէր,
Որ թագը շուռ գէր։
Մեր թագւորին էլ ինչ պիտէր,
Որ թագը շուռ գէր։—
Թագւորաքոյր կայնած պիտէր,
Որ թագը շուռ գէր։
Մեր թագւորին էլ ինչ պիտէր,
Որ թագը շուռ գէր։—
Թագւորաղբէր կայնած պիտէր,
Որ թագը շուռ գէր։
Մեր թագւորին էլ ինչ պիտէր,
Որ թագը շուռ գէր։—
Թագւորքաւոր կայնած պիտէր,
Որ թագը շուռ գէր։

## 40

### Է.

Էս թաղիկ ո՞ւմ թաղի նըշան էր,
Որ թաղիկը շուռ գէր,
Ծուռ ու մուռ գէր կանաչ ու կարմիր—
Էջմիածնայ թաղ յաջմէն դաղրէր,
Որ թաղիկը շուռ գէր,
Ծուռ ու մուռ գէր կանաչ ու կարմիր։

Էս թաղիկ ո՞ւմ թաղի նըշան էր,
Որ թաղիկը շուռ գէր,
Ծուռ ու մուռ գէր կանաչ ու կարմիր—
Լուսաւորչու թաղ յաջմէն դաղրէր,
Որ թաղիկը շուռ գէր,
Ծուռ ու մուռ գէր կանաչ ու կարմիր։

Էս թաղիկ ո՞ւմ թաղի նըշան էր,
Որ թաղիկը շուռ գէր,
Ծուռ ու մուռ գէր կանաչ ու կարմիր—
Տըրդատ թաղ, որի թաղ յաջմէն կայնէր,
Որ թաղիկը շուռ գէր,
Ծուռ ու մուռ գէր կանաչ ու կարմիր։

## 41

### Ը.

Թագւոր քարով, հազար քարով,
Դու վարդ ես կանա՛չ տերեւով.
Էջմիածին զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զորութի՛նով։

Թագւոր քարով, հազար քարով,
Դու վարդ ես կանա՛չ տերեւով.
Երուսաղէմ՝ զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զորութի՛նով։

Թագւոր քարով, հազար քարով,
Դու վարդ ես կանա՛չ տերեւով.
Սուրբ Կարապետ զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զորութի՛նով։

## 42

### Թ.

Թագաւոր թագն ի գըլուխ.
Ծառ ժուռ ու մուռ էր.
Էջմիածին Երևանցին—
Իւր մուրադը տէր։

Թագաւոր թագն ի գըլուխ.
Ծառ ժուռ ու մուռ էր.
Սուրբ Կարապետն էր Մըշեցին,
Իւր մուրադը տէր։

Թագաւոր թագն ի գըլուխ.
Ծառ ժուռ ու մուռ էր.
Երուսաղէմ՝ մէջ աշխարհքին
Իւր մուրադը տէր։

## 43

### Ժ.

Թա՛գւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արեւ քեզ նըման.
Էն աղօթրան, որ կը բացուէր,
Բացուէր քո արեւուդ նըման։

Թա՛գւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արեւ քեզ նըման.
Էն արեգակն, որ կը ծաղկէր,
Ծաղկէր քո արեւուդ նըման։

Թա՛գւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արեւ քեզ նըման.
Կանանչ կարմիր, որ կը կայէր,
Կայէր քո արեւուդ նըման։

44

ԺԱ.

Թագւոր, ինչ բերեմ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Անթառամ ծաղիկ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագւոր, ինչ բերեմ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Բալասան ծաղիկ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագւոր, ինչ բերեմ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Համասփիւռ ծաղիկ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման,—
Քո կանանչ արև քեզ նըման.
Գինեբբուկ ծաղիկն, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման,—
Քո կանանչ արև քեզ նըման.
Սիրուն մանուշակ, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

Թագւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման,—
Քո կանանչ արև քեզ նըման.
Գարնան վարդենին, որ կը ծաղկի,
Ծաղկէր քո արևուդ նըման։

## 45

### Ժ·Բ.

Թագւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Անուշ ռեհան, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։

Թագւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Շուշան ծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։

Թագւոր, ի՞նչ բերեմ՝ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Նարգիզ ծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին։

Թագւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արև քեզ նըման.
Դեղին կակաչ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին.

Թագւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արև քեզ նըման.
Սարի սուսան, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին.

Թագւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արև քեզ նըման.
Աղբրանց-արիւն, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին.

Թագւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըման, —
Քո կանանչ արև քեզ նըման.
Ոսկեծաղիկ, որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին.

## 46

### ԽԶ.

Թա՛գւոր, ինչ բերեմ՛ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Միրանի ծառ, որ կը ծաղկէր,
Ծաղկէք դուք էլ էնոր նըման։

Թա՛գւոր, ինչ բերեմ՛ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Խընձորի ծառ, որ կը ծաղկէր,
Ծաղկէք դուք էլ էնոր նըման։

Թա՛գւոր, ինչ բերեմ՛ քեզ նըման,—
Քո կանաչ արև քեզ նըման.
Դամոնի ծառ, որ կը ծաղկէր,
Ծաղկէք դուք էլ էնոր նըման։

Թա՛գւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըշան,—
Քո կանաչ արև քեզ նըշան.
Խաղողի ու կոճակ կապեր,
Պըտկէք դուք էլ էնոր նըշան։

Թա՛գւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըշան,—
Քո կանաչ արև քեզ նըշան.
Պընտուկի ծառ պըտուկ կապեր,
Պըտկէք դուք էլ էնոր նըշան։

Թա՛գւոր, ի՛նչ բերեմ՝ քեզ նըշան,—
Քո կանաչ արև քեզ նըշան.
Ընկուզի ծառ պըտուղ կապեր,
Պըտղէք դուք էլ էնոր նըշան։

47

ԺԴ.

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց։
Ծաղիկն էլ ինչենի՛ պիտէր ծաղկունաց,
Քաղե՛նք, բերե՛նք մեր թագաւորին,
Որ փաթըթէր ճուղն ու տերև հետ իրրաց։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց։
Ծաղիկն էլ խընկենի պիտէր ծաղկունաց,
Քաղենք, բերենք մեր թագաւորին,
Որ փաթըթէր ծառն ու ծաղիկ հետ իրրաց։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց։
Ծաղիկն էլ նըռնենի պիտէր ծաղկունաց,
Քաղենք, բերենք մեր թագաւորին,
Որ փաթըթէր թուփն ու տերև հետ իրրաց։

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց։
Ծաղիկն էլ նըշենի պիտէր ծաղկունաց,
Քաղե՛նք, բերե՛նք մեր թագաւորին,
Որ փըթըթէր ճութն ու տերև հետ իրրաց։

## 48

### ԺԸ.

Երկնից, գետնից սուրբ զօրութիւնով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցաւ,
Ծառ բազմեցաւ,
Կանաչ ու կարմիր։

Էջմիածնայ սուրբ զօրութիւնով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցաւ,
Ծառ բազմեցաւ,
Կանաչ ու կարմիր։

Լուսաւորչի սուրբ զօրութիւնով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցաւ,
Ծառ բազմեցաւ,
Կանաչ ու կարմիր։

**49**

Ժ·Զ.

Գնացէ՛ք ասէ՛ք,
Թագւորամէր,
Թագւորամէր,
Ծառըդ գոված է.
Սէլ մի սեղան,
Խոյ մի խորովու
Ծառ գովողինն է։

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թագւորահէր,
Թագւորահէր,
Ծառըդ գոված է.
Եզ մի խորովու,
Տիկ մի գինի
Ծառ գովողինն է։

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թագուորաքոյր,
Թագուորաքոյր,
Ծառըդ գոված է.
Ո՛լ մի խորվու,
Դու մի գրնի
Ծառ գովողի՛ն է։

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թագուորահարս,
Թագուորահարս,
Ծառըդ գոված է.
Ձորս ջուխտ գուլբայ,
Մի թաշկինակ
Ծառ գովողի՛ն է։

Գնացէ՛ք, ասէ՛ք,
Թագուորաղբէր,
Թագուորաղբէր,
Ծառըդ գոված է.
Երկու ճրնճուղ,
Մէկ գարեհաց
Ծառ գովողի՛ն է։

## 50

Մէկ շաբաթ օր, լուս կիրակին,
Քառասուն հոտաղ ժողովուեցին,
Գնացին, հասան մէջ կէս դաշտին,
Իրենց միջին խորհուրդ արին,
Չոքան, լացին, Աստուած կանչին,
Բողէ ուրձէն խաչ շինեցին,
Չորս գըլուխներ խընձոր զարկին,
Թղենի թըփով փաթաթեցին,
Կայնան դիմաց, խաչ հանեցին,
Տուին իրար, համբուրեցին,
Տարան, դըրին կանափոցին։
Ռուռայ կրկնիմ Կարոս խաչին։

Չոք մ՚էլ չոքան, մէկ մէկ բերան
«Տէ՛ր, ողորմեա՛» կանչեցին,
Չոքան, լացին, աղաչեցին,
Աստուծմէ շատ խընդըրեցին,
«Դու՛ շնորհք տաս Կարոս խաչին»։

*Ծընորհք եկաւ Կարոս խաչին,*
*Բողէ խաչ արծաթ դարձուցին,*
*Խընձորներ ոսկի դարձուցին.*
*Կայնան դիմաց, խաչ հանեցին,*
*Մէկ մէկ ծունըր աղօթք արին,*
*«Տէ՛ր, ողորմեա՛» կանչեցին.*
*Մատունք յերկնուց մէջն իջուցին.*
*Թուաւ, գընաց մէջ Կարոս ածուին,*
*Գիշեր լուս կանէր վեր Կարոս ածուին,*
*Ցերեկ հով կանէր վեր Կարոս ածուին,*
*Անուն Կարոս խաչ կոչեցին.*
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին:

*Երազ գընաց Տէր Օհանին.*
*«Արի, տա՛ր ինձ եկեղեցին.*
*Գիշեր մեծ լոյս տամ՝ տաճարին,*
*Ցերեկ հով անեմ՝ աշխարհին».*
*Ելաւ պատմեց մեծ իշխանին.*
*«Խաչ մ'է եղեր հայոց ազգին,*
*Անուն դըրած Կարոս՝ խաչին.*
*Բերենք, դընենք մեր տաճարին,»*
*Ցերեկ հով կանի մեր աշխարհին*
*Գիշեր լոյս կըտայ մեր տաճարին.*
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին.

*Աստուած աղեկն անէ իշխանին,*
*Ելաւ, կանչեց ժողովրդին։*
*Ելան, եկան, ժողովուեցին.*
*Մեծ քահանան առաւ սարկաւագ,*
*Եօթ քահանայ, եօթ վարդապետ,*
*Խաչ խաչվառով թափոր արին,*
*«Տէր, ողորմեա» կանչեցին,*
*Եկան, կայնան դէմ Կարոս խաչին։*
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին։

*Զոքան, լացին, Աստուած կանչին,*
*Կարոս խաչ թռաւ գիրկ Տէր Օհանին,*
*Ոսկի քորող վարդապետին,*
*Գողաւ, դըրաւ վեր իր գըլխին։*
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին։

*«Տէր, ողորմեա» տացին,*
*Առան, տարան Կարոս խաչին,*
*Տարան, դըրին սուրբ տաճարին,*
*Ցերեկ հով կանէր վեր աշխարհին,*
*Գիշեր լոյս կամար կապէր վեր տաճարին։*
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին։

Մէկ չուն գըղիր կար մէջ գեղին,
Ուրացու հայոց լոյս հաւատ,
Գընաց, ասաց Քուրդ Պարոնին.
«Խաչ մ'է երեր հայոց ազգին,
Անուն գըրած Կարոս՝ խաչին,
Գիշեր լոյս կըտայ վեր տաճարին,
Ցերեկ հով կանէ վեր աշխարհին.
Էն վայել չէ հայոց ազգին,
Էն վայել է քո դիւանին.
Ակն ու զոհար քո խանումին,
Ցերեկ հով ըռնի քո բերդին,
Գիշեր լոյս տայ քո քաղաքին»։
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին:

Խելըն ընկաւ Քուրդ Պարոնին,
Եկաւ կայնաւ վեր պարըսպին.
Կանչեց Մահմադ, կանչեց Ալին,
Ասաց. «Խաչ մ'է երեր հայոց ազգին,
Գնացէք, բերէք Կարոս խաչին.
Էն վայել չէ հայոց ազգին,
Էն վայել է իմ դիւանին,
Ակն ու զոհար իմ խանումին.

*Ծերեկ հով անէ իմ բերդին,*
*Գիշեր լոյս տայ իմ քաղաքին։*
Մատաղ կըլնիմ Կարօս խաչին:

*Ելան, գնացին Մահմադ, Ալին,*
*Փէտ մի զարկին դեղականին,*
*Խարար տարան մեծ իշխանին.—*
*Աստուած օրհնի էն իշխանին,*
*Կանչեց Մահմադ, կանչեց Ալին,*
*Ասաց. «Խընդիր կանեմ Թուրք Պարոնին»*
*Աղաչանք կանեմ Թուրք Պարոնին,*
*Էն բան չունի հայոց խաչին.*
*Կուզի ոսկի, էս է ոսկին,*
*Կուզի արծաթ, էս է արծաթ,*
*Խաչ որ կայ՝ է ոսկի, արծաթ,*
*Ձեռ մի զարկէք Կարօս խաչին։*
Մատաղ կըլնիմ Կարօս խաչին։

*Առաւ Մահմադ, չառաւ Ալին,*
*Յօժար չեղան Մահմադ, Ալին.*
*Գնացին, հասան դուռ Լուսարարին.*
*Թափկով զարկին էն Լուսարարին.*
*Ելաւ բերաւ սինով ոսկին,*

Ասաց. «Առէք ձեր ոսկերի դին,
Դարձէք, գնացէք վեր ձեր հեռին,
Ձեռ մի զարկէք Կարոս խաչին.
Էն վայել չէ Բուրդ Պարոնին,
Էն վայել է հայոց ազգին»։
Մատաղ կըլնիմ Կարոս խաչին։

Խելք չընկաւ Մահմադ, Ալին.
Գնացին, կայնան դուռ տաճարին,
Տաճարի դուռ ձին կապեցին.
Թափկով զարկին դուռ տաճարին,
Գնացին, մըտան մէջ տաճարին,
Ելան, կայնան բեման քարին,
Ձեռ ձըգեցին Կարոս խաչին։
Մատաղ կըլնիմ Կարոս խաչին։

Կատղաւ Ալին, կատղաւ իր ձին,
Դարձաւ, կերաւ իր ձիու ցին.
Կատղաւ Մահմադ, կատղաւ իր ձին,
Ատամն առաւ ժեխի կաչին,
Ինչպէս կրակի ձին իր դարին.
Լըցին մէջ մաղէ խարարին,
Ու զարկեցին Բուրդ Պարոնին.

Թաքար տարան Բուրդ Պարոնին,
Կատղեր Մահմադ, կատղեր Ալին.
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին.

Էն հաւատուրաց շան գլխը.
Թեւքի ձգեց Բուրդ Պարոնին,
Ասաց. «Էն բան չէ Կարոս խաչին,
Էն բան է հայոց ազգին»։
Թեւքն ընկաւ Բուրդ Պարոնին,
Ելաւ, կայնաւ բերդի բրջին,
Ձէն մի տուաւ մէջ իր բերդին,
Կանչ մ'էլ կանչեց մէջ իր քաղքին.
Ասաց. «Ելէք, զօրք կապեցէք,
Գընացէք դէմ Կարոս խաչին»։
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին:

Ելաւ, եօթ գունդ զօրք ժողովեց,
Ճամբայ դըրաւ վեր Կարոս խաչին.
Գնացին, հասան մէջ կէս դաշտին,
Առջին դարձաւ վեր յետինին,
Ետին դարձաւ վեր առջինին,
Ատամ առան իրենց կաշին.

Իրար տուին սըրին, թըրին,
Լէշէ բերդեր շինեցին,
Արնէ գետեր կապեցին,
Ամենքն իրար կոտորեցին,
Էն զօրքերի վերջը բերին։
Մառայ կըլնիմ Կարոս խաչին։

Մէկ խաբրաբեր պըրծաւ, գընաց,
Խաբար տարաւ Թուրդ Պարոնին,
Ասաց. «Աստուած քո տուն քանդի.
Գնացինք. Հասանք մէջ կէս դաշտին,
Յետին դարձաւ վեր առջինին,
Առջին դարձաւ վեր յետինին,
Ատամ՛ առան իրենց կաշին,
Իրար տուին սըրին, թըրին,
Լէշէ բերդեր շինեցին,
Արնէ գետեր կապեցին,
Ամենքն իրար կոտորեցին,
Մեր զօրքերի վերջը բերին,
Ես խաբրաբեր պըրծայ, եկայ»։
Մառայ կըլնիմ Կարոս խաչին։

Խելք չընկաւ Թուրդ Պարոնին,
Ասաց. «Էն բան չէ Կարոս խաչին,

Էն բան է հայոց ազգին.
Խաչն որ կայ, է արծաթ, ոսկին,
Էն վայել չէ հայոց ազգին.
Էն վայել է իմ' դիւանին,
Ակն ու գոհար իմ' խանումին։
Ելաւ, կայնաւ բերդի բըրջին,
Չէն մ՚էլ տուաւ մէջ իր բերդին,
Կանչ մ՚էլ կանչեց վեր իր քաղքին,
Ասաց. «Ելէք, զօրք ժողվեցէք,
Գնացէք դէմ հայոց ազգին։

Ծառայ կըլնիմ Կարոս խաչին։

Բերդ երերաց վեր իւր հիմին,
Կատղաւ Պարոն մէջ իր բերդին,
Ձին էլ կատղաւ մէջ ախոռին.
Կատղաւ մանուկ օրօրոցին,
Կատղաւ խանում մէջ իր օդին,
Կաթն էլ կատղաւ մէջ պըղընձին.
Կատղաւ գըղիր մէջ իր դոմին,
Դարձաւ, կերաւ միսն իր անձին։

Ծառայ կըլնիմ Կարոս խաչին:

Ձիղջն ընկաւ սիրտ Թուրք Պարոնին,
Ելաւ, ընկաւ վեր իր չոքին,
Ասաց. «Թառասուն կարաս ոսկի ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Ես կայնիմ մէջ իմ բերդին։
Թառասուն կըռուան գոմէշ ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Տըղէն կայնի օրօրոցին.
Թառասուն անծին երինջ ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Խանում կայնի մէջ իր օդին։
Թառասուն ճիւղ կոխը ոչխար ունիմ,
Խոստում կանեմ Կարոս խաչին,
Իմ բերդ կայնի վեր իր հիմին.
Թառասուն գութան դաշտ կու բանի,
Էն էլ մատաղ Կարոս խաչին,
Ձին էլ կայնի մէջ ախոռին.
Թառասուն նախիր դաշտ կարածի,
Էն էլ մատաղ Կարոս խաչին,
Կաթն էլ կայնի մէջ պըղընձին»։

Ծառայ կըլնիմ Կարոս խաչին:

Մատաղ չանցաւ մօտ Կարոս խաչին,
Հաւան չեղաւ էն խոստումին.
Քուրդ Պարոնի բերդ աւերեց,
Աշխարհ թափան, եկան վերան.
Հիւանդացուց էն շուն գըղլին,
Ներն ընկաւ գըղլի բերան.
Մեռաւ, տարան լէշ խորեցին,
Ճընեբ հանին, տարան, կերան.
Ծառայ կըլնիմ Կարոս խաչին։

# Ծանօթութիւն

*Հազար ու մի խաղի այս երկրորդ յիսնեակն եւս կազմուած է ամբողջապէս ժողովրդական երգերից, որոնք բոլորն ունին իրենց յատուկ եղանակները և որոշուած են երգելու և ոչ կարդալու համար։*

*Ամբողջութիւնը կատարուած է ինչ-պէս առաջին յիսնեակում։ —*

*Համար* 7 *և* 14 *երգերը ժողովրդի մէջ արդէն ամբողջ են։*

*Համար* 3—5, 7, 20—22, 24, 28—50 *երգերի վարիանտները բաղդատուած են, ամբողջացրած և տները որոշ դասաւորու-թեամբ են առնուած։*

*Մնացած* 18 *երգը մեր խմբագրու-թեամբ են կազմուած, իրարուց անկախ խաղերից։*

Այս երգարանի գործածութեան ժամանակ պէտք է ի նկատի ունենալ.

1) Կրկնակները տպուած են շղատառերով և միայն առաջին տների մէջ. յաջորդ տների մէջ պէտք է համապատասխան տողերից յետոյ երգուին նոյն կրկնակները:

2) Բացի մի քանի բառերից, ինչպէս են՝ Ես (դերանուն), Եկ և այլն, բառասկզբի Ե տառը, ըստ ժողովրդական արտասանութեան, պէտք է Է հնչել. նոյնպէս և բառասկզբի Ո տառը ամփոփաբար արտասանւում է իբրև օ. ինչպէս՝ Ողորմի — օղորմի:

Ս. Էջմիածին. Ն. Վ. Եւ Մ. Ա.

# ՑԱՆԿ

Եր

1 Աղջի՛, արի՛, քե փոս տանեմ (30) 52
2 Աղջի, դու հուր ես-մուր ես (23) 42
3 Աղջիկ եմ տանը դըրած (13) . 30
4 Ամպել ա, ձիւն չի գալի (9) . 26
5 Ա՜յ աղջիկ ծամո՜վ աղջիկ (15) . 32
6 Առաւօտ լոր մտաւ արտ (20) . 37
7 Արօրն ասաց տատրակ հաւքուն (8) 24
8 Բարձր սարերու հովին (7) . 23
9 Գացէ՛ք, բերէ՛ք թագւորամէր (35 Բ.) 65
10 Գնացէ՛ք, ասէ՛ք (49 ԺԶ.) 85
11 Դու կայնել ես ընտարակին (32) 57
12 Ելէ՛ք, տեսէ՛ք, ո՞րն է կերել (33) 59
13 Ես աղջիկ եմ հէր չունիմ (12) . 29
14 Երկնից գետնից (48 ԺԵ.) . 84
15 Եօթն օր, եօթ գիշեր (21) . 38
16 Զի՞նչ ու զինչ տամ (24) . . 43
17 Էս առուն ջուր է գալի (19) . 36
18 Էս թագիկ ո՞ւմ թագի նման էր (40 Է.) 73

Էջ

19 Էս որ քեզ տալով (22) . . 40
20 Էջմիածին երթամ ուխտ (2) . 7
21 Թագաւոր թագն ի գլուխ (42 Թ.) 75
22 Թագաւորին ծաղիկ պիտէր (47 ԺԴ.) 83
23 Թագւոր, բարով, հազար բարով (41 Ը.) 74
24 Թագւոր, ինչ բերեմ (43 Ժ.) . 76
25 Թագւոր, ինչ բերեմ (44 ԺԱ.) . 77
26 Թագւոր, ինչ բերեմ (45 ԺԲ.) . 79
27 Թագւոր, ինչ բերեմ (46 ԺԳ.) . 81
28 Թալիշու ճամբէն դուզ ա (26) . 45
29 Իմալ էնեմ (31) . . . 54
30 Լուսաստղ քիթ գցեց դուս (3) . 8
31 Խնձոր ունիմ կծած ա (18) . 35
32 Խումար պառկի երեսրաց (28) . 48
33 Ծիրանի ծառ, բար մի տա (1) . 5
34 Կայնել եմ դոլ չեմ կարող (6) . 22
35 Կիրակմուտ երիկունը (25) . 44
36 Կոտ ու կէս կորեկ ունիմ (5) . 19
37 Հարբել եմ ու չեմ գինով (14) . 31
38 Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի (27) . 46
39 Հօդալլօ, ջա՛ն, հօդալլօ (17) . 34
40 Հօ՛ Օրհնեալ է Աստուած (4) . 10
41 Ղարիբ եմ Կարս գնացի (11) . 28
42 Մայրիկին եազման բերին (29) . 50

| | | էջ |
|---|---|---|
| 43 | Մեր թագուորին էլ ինչ պիտէր (39 Չ.) | 72 |
| 44 | Մեր թագուորին ինչ կու պիտէր (38 Ն.) | 71 |
| 45 | Մեր թագուորին ինչ պիտի (34 Ա.) | 64 |
| 46 | Մեր թագուորն էր խաչ (37 Դ.) . | 68 |
| 47 | Մէկ շաբաթ օր (50) . . | 87 |
| 48 | Պարտքով կովը ծախեցին (10) . | 27 |
| 49 | Սափորըն ուսիս դըրի (16) . | 33 |
| 50 | Օրհնեալ բարերար Աստուած (36 Դ.) | 57 |
| | Ծանօթութիւն . . . | 99 |
| | Ցանկ . . . . | 101 |